ՆՇԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ ԽԵԹԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հմայակյան Հ. (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)
hhmayakyan@yahoo.com

Բանալի բառեր՝ Հայասա, Խեթա-հայկական, Բ. Հրոզնի, Ն. Մարտիրոսյան, լեզվամշակույթ, սեպագիր:

Խեթահայկական լեզվամշակութային փոխառնչությունների, ինչպես նաև խեթական տեքստերում հիշատակվող Հայասա քաղաքական միավորի (Ք.ա. XIV-XIII դդ.) էթնիկ պատկանելիության, տեղադրության հարցը դեռևս անցյալ դարի 1920-ականներից գրավել է թե՛ հայ, թե՛ օտարազգի ուսումնասիրողների ուշադրությունը: Այս հարցերին անդրադարձած հեղինակների շարքում գիտության մեջ, հիմնականում, որպես առաջինները, հիշատակվում են Է. Ֆոռերի (1931), Է. Կավինյակի (1932-1934), Ջ. Բոնֆանտեի (1939), Հ. Պեդերսենի (1945), Ն. Ադոնցի (1946), Գ. Ղափանցյանի (1948) և այլոց աշխատությունները: Այս հեղինակների շարքում, սակայն, շատ քիչ է նշվում Նշան Մարտիրոսյանի անունը, ով առաջինն էր, որ նկատել էր Հայասա տեղանունը խեթական սեպագիր տեքստերում և փաստել «հայ» ցեղանվան հետ նրա կապը: Խոսքը վերաբերում է դեռևս 1921-1922 թթ.-ին, երբ, ինչպես Ն. Մարտիրոսյանն է նշում, ինքն իր ուսուցչի՝ Բ. Հրոզնիի (խեթական սեպագիր տեքստերը վերծանած չեխ հանրահայտ գիտնական) հետ կարդում էին խեթական սեպագիր տեքստեր և քարտարան էին պատրաստում, որը պետք է հիմք հանդիսանար խեթերեն-չեխերեն բառարանի համար: Այդ ժամանակ էլ, ինչպես նշում է Ն. Մարտիրոսյանը, խեթական տեքստերում հանդիպում է Հայասա տեղանվանը և Հրոզնու խորհրդով հիմնավորապես ուսումնասիրում այդ տեղանունը պարունակող խեթական

արձանագրությունները: Այդ տարիներին Ն. Մարտիրոսյանն անդրադառնում է նաև խեթահայկական լեզվական զուգահեռներին և արդեն 1924 և 1929 թթ.-ին «Հանդէս ամսօրեայ»-ում լույս են տեսնում նրա առաջին դիտարկումները, որոնք ժամանակագրորեն ավելի վաղ են մյուս հեղինակների հրապարակումներից: Հետագայում նրա՝ այս բնագավառին վերաբերող ուսումնասիրությունները տեղ են գտել «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը», (1957), «Պրպտումներ փոքրասիական անուններու մասին» (ՊԲՀ, 1961, 3-4), «Նպաստ մը հեթ և հայ բառաքննության» (ՊԲՀ, 1972, 2՝ տպված հետմահու) և այլ աշխատություններում:

Ցավոք, նրա դիտարկումների հեղինակային իրավունքը երբեմն չի պահպանվել կամ դրանք լայն շրջանառություն չեն ստացել, հաճախ էլ, ինչպես ինքն է նշում, յուրացվել կամ կիրառվել են առանց հեղինակին հղելու: Այս է պատճառը, որ Ն. Մարտիրոսյանի դիտարկումները չեն ներառվել նաև խեթագիտական ժամանակակից արևմտյան ուսումնասիրություններում կամ տեղ չեն գտել խեթերենի ստուգաբանական բառարաններում: Այնինչ, Ն. Մարտիրոսյանի, մասնավորապես, խեթահայկական զուգահեռներին վերաբերող ստուգաբանությունների մի զգալի մասը մեծ արժեք ունեն և նշանակալից ներդրում են ոչ միայն հայագիտության, այլև խեթագիտության մեջ:

Ձեկուցման նպատակն է ընդհանրական ձևով ներկայացնել Ն. Մարտիրոսյանի վաստակն այս առումով:

NSHAN MARTIROSYAN’S (NESHAN MARTIROSSIAN) MERITS IN THE STUDY OF ARMENIAN-HITTITE INTERRELATIONS

Hmayakyan H. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)